ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<09>> հոկտեմբերի 2026թ. Ն ՄՈ/571 -Ա

ք. Արմավիր

«ԱՐՄԱՎԻՐԻ Հ. 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով «Արմավիրի Հ. 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Արմեն Հակոբյանի 2026 թվականի հոկտեմբերի 7-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արմավիրի Հ. 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Արմեն Հակոբյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 2026 թվականի հոկտեմբերի 12-ից 21-ը ներառյալ՝ 8 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արմեն Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հոկտեմբերի 22-ից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 29028401791 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**